

1890

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Պ Ի Ս Ա Ր Ա Ն

ՀԱՏՈՐ ԽԸ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք

ՀԱՅ — ՎԵՆԵՏ

(Shu յ'էջ 369)



ԱՐՄԿՈՅԾ չկայ որ մեծապէս հետաքննական են հանգա-
մանք վաճառականութեան վեճետաց ի Հայս. վասն զի
այն պատճառաւ եղած են երկու ժողովրդոց իրարու հետ
ունեցած փոխադարձ յարաբերութիւնք: Այլք յառաջ
քան զմեզ հետամուտք և քննողք, գրեցին և հրատարա-
կեցին ինչ որ այս նիւթիս նկատմամբ յաջողեցան գը-
նել վաւերականս ի դիւանաց վեճետիոյ, ի ժամանակագրաց և
վաճառականութեան վրայ գրողներէ. որոց մէջ վերջին և ամենէն ա-
ւելի կատարելագոյն՝ բազմահմուտն Հայոտ, նախ ի համառօտ՝ և ա-
պա յընդարձակ երկհատոր գիրսն որ զվաճառականութենէ արեւելից
ի Միջին դարս: Մենք զիտաւորութիւն չունինք ասոնց ըսածները կըրկ-
նել, և կամ ջանալ յաւելուլ ի նոյնս. այլ միայն նախածանօթ կամ
դեռ ևս անծանօթ վաւերականները (documents) հրատարակել,
որչափ գտեր ենք, վաճառականական այլ և այլ խնդրոց վրայ, գը-
մաց համեմատութեան, վեճետիոյ հասարակապետութենէն եղած
շնորհմանց՝ առ վաճառաբերս կամ առ մաքսանենդս ոմանս. յիշե-
լով ինչ ինչ ի նիւթոց վաճառուց բերելոց կամ տարելոց. յիշեցընե-
լով միանգամայն որ այսպիսի նիւթոց վրայ զանազան տեղեկու-
թիւններ կամ գիտելիք՝ կը գտնուին մեր թաղաւորաց ձեռքով տը-

բուած պարգևագրոց մէջ, յորոց զմանա արդէն յիշեցինք ի նախընթաց յօդուածս, և զայլս մէջ պիտի բերենք ըստ ժամանակի յարաբերութեան նոցա ընդ պետութեան վննեակոյ. թող որ վերը դրուած նաւարկութեան յիշատակարանաց մէջ յաճախ յիշատակութիւն եղաւ նաև վաճառականայ:

Այս վաւերականաց մէջ ամենէն կտրիւր կրնայ համարուիլ մեծ Ատենին վճիռն՝ յամի 1283 ի 22 յուլիսի, վաճառականական ընկերութիւն մը հաստատելու համար յԱյաս, ընդ տեսութեամբ Պայլին, վաճառականութեան Բաւրաքի, Տիւրքի, Պղպեղի. այդ ընկերութեան մէջ անոնք միայն կարող էին մտնել՝ որ երկու հարիւր բիզանդէն աւելի գումարով մասնակցէին: Որէն էր վաճառականաց սահմանեալ նաւատորմաւ և յորոշեալ ժամանակի նաւել, և թէպէտ արգելեալ էր ըստ հաճոյս՝ այս կամ այն նաւով ճանապարհորդել, բայց մերթ թալ կը տրուէր իրենց առանձին նաւով ալ երթալ, յաւելաւ ընկերելով տորմիւն, այլ նաև անկէ անջատարար. միայն պետութեան իրաւունքն էր ուղած պայմանը դնել հետեւին. ինչպէս ի 1311 (յունիս 22) Պէմպոյ Տարտի նաւապետին վրայ պարտը դրնելով, որ առ թագաւորն Հայոց զրկուած զեապանը ձրիաբար տանի և դարձնէ: Քաղաքական դիպուածոց համեմատ արգելք կը դրուէր վաճառականաց՝ չերթալ ի Հայս կամ՝ յայլ աշխարհս. ինչպէս յամի 1320, Օշին թագաւորին մահուան և Լեւոնի Գ. յաջորդութեան տութիւն: Երբեմն ալ կ'արգելուի այս կամ այն նիւթոց արտահանութիւն. օրինակ իմն՝ կտաւոյ, յամի 1322 — 3: Յամի 1328 հրաման կը տրուի որ ի Հայոց կամ ուրիշ աշխարհներէ վերցուած վաճառք՝ որ առջիս անդին քննուի ելն, վննեակոյ ծոցին ծովապետը վերցնէ ու փոխադրէ ուր որ արժան է: Աւելորդ է ըսել որ հասարակաց համար օրէնք սահմանած առեւտրին, զանց չէին ըներ նաև զխնդրք առանձնականաց. օրինակի համար, վճիռ մը կը գտնենք որ կը պատուիրէ քննել և խնամել Սեբաստիոնի նաւը, որ ալեկոծութեամբ քննուած էր յԱյաս և յայլ կողմանս:

Վաճառք. — Արտահանուած նիւթը կրկին են. մին թանկագին բերք մերձաւոր և հեռաւոր արևելեան աշխարհաց, Հնդկաց, Ասորոց, Պարսից և ճենաց, զորս յաճախ կ'արաւանք ցամաքի ճամբով կը բերէին յԱյաս. և թէ ինչ վաճառք էին ասոնք, յայտնի է յայլ և այլ գրուածոց և ի Հայոսէ. իսկ միւսն՝ բնիկ բերք Սիսուանայ. որոց մէջ զլիաւոր էր Բաւրաքի, ինչպէս յիշեցինք. և վաճառականական յարաբերութեանց վերջի տարիներուն (1344) կը հանգիպինք որ մանտուացի մը (Միքայէլ Լօթաթարոյ) այս նիւթէն 4000 հակ զրկեր է ի վննեակի: Նշանաւոր էր և բամբակեայ հիւսուածն Bucherami կամ ըստ փռանկաց Boucrans կոչուածը:

Կիրիկիոյ յատուկ բերք կամ ձեռագործ մ'ալ էր Յփսի ի օտիոյ այծից, որոյ յիշատակութեան կը հանդիպինք աւելի հնագոյն դարուց մէջ ալ. ուստի և պարզեապէս մէջ մասնաւոր պայմաններ ալ զնեւ հարկ եղաւ, մանաւանդ երբ վենետք ալ սորվեցան արուեստը, և նոյն իսկ Հայոց երկրին մէջ սկսան գործել: Թագաւորութեան վերջուեկէն ետքը, նաև նոյն իսկ նոր դարուց մէջ (ժ.Չ—Է), այս ձեռագործս Հայոց ձեռքով կը բերուէր ի վենետիկ, որոյ յիշատակն շատ անգամ կ'ըլլայ Հինգ իմաստնոյ կամ պետութեան վճռոց մէջ և ի նօտարականս: Հայրենեաց իբրեւ սեպհական ու պատուական բերք՝ Հայոց դեսպանին ձեռքով ընծայ կը տարուէր երբեմն առ սրբազան քահանայապետն Հռովմայ. բայց որովհետև ծածկեր էր զայն և զօսկեգիպակն ընդ այլով կարասեաւ, բռնուեցաւ և արգիլուեցաւ ի մաքսաւորաց. այլ ի չնորհս տանողին և որում կը տանէր՝ ազատութիւն եղաւ դեսպանին: Ուրիշ նիւթերէ զատ կը յիշատակուի տեղ տեղ և Հայկական աղ (Sal Arminiago), որ հաւանօրէն պիտի ըլլայ Sal ammoniaco:

Հանքային նիւթերէն կամ ի մետաղաց՝ մասնաւոր կերպով կը յիշուին Երկաթ, Պղինձ, Պաղլիդ: Ի կենդանեաց՝ Զի, Զորի, Էշ, Արջաւ, և մանաւանդ Մուշտակը՝ զոր կը մատակարարէին մեծ Հայք, մուրք Գաւլոյ և եղջերք: Իսկ ի բուսականաց՝ առանձինն, կամ ուրիշներէն աւելի յաճախագոյն կը յիշուի ի դիւանս վենետիկոյ Պղպեղ՝ յԱյաս. զոր անշուշտ ինքեանք Հայք կը բերէին ի Հնդկաց, կամ իրենց սեպհականած էին զվաճառն: Ատոնցմէ զատ Յորեւսն, Զաւիշ, Խաւդոյ և Գիւնի, աւտաշ փայտ, Խար, և այլն:

Իսկ ի վենետաց ի Հայս փոխադրած նիւթերն էին, նախ, զԸլխաւոր նիւթք զգեստուց, անկազմ հանեալ ի Հայոց և արուեստագործուած կրկին հօն մուծանելով, ինչպէս աւուշեղէնք, կտաւիք և պէսպէս ոսկեղիսպակք (Samiti): Նշանակութեան արժանաւոր է մուրհակն պահանջից Միքայելի Լօթաթարոյ կամ Լոթաթարոյի ուրումն (1306) Սմբատայ Թագաւորի Մանուէլ դեսպանէն կամ գործակալէն, որ իր ձեռքովը ինն տախտ կամ փերթ ոսկեղիպակ գնած էր, ամէն մէկը 800 նոր դրամոյ արժէքով, Եգիպտոսի սուլտանին ընծայ զրկելու համար: Ատոնցմէ զատ՝ այլ և այլ Հաւնեղէնք (Épicerries), զորս ընդ ծով կը բերէին յԱրաբիոյ, ի Հնդկաց և յեգիպտոսէ. նոյնպէս և վենետիկեան յատուկ ձեռագործք՝ Ապակեղէնք և նմանք, ևւառոց կազմուածք և ևւաք, երբեմն և զէնք, զոր Այասայ բերդապահն խնդրեց և ընդունեցաւ ի Պէմպոյէ: Հայոց համար կարեւոր նիւթերէն մէկն ալ տաշուած և յղկուած փայտն էր, զոր իրենց երկրին մայրիք կը մատակարարէին օտարազգեաց, և պատրաստածը կ'ընդունէին ի պէտս յիւսութեանց: Հետաքրնելի վաւերական մը կայ 1326 օգոստոս 21 թուականաւ, յորում և ցուցակ նիւթոց աւաքելոց

ի վենետից ի Հայս, և գլխաւորաբար փայտեղէնք մանրամասն նշանակեալ չափաւ, թուով և արժէիւք. ուրիշ անգամներ ալ յԱյաս նստող Պայլին տանը նորոգութեան համար պէտք եղած փայտը զըրկուեցաւ ի վենետից:

Վաճառականաց շահասիրութիւնը երբեմն չէր խղճէր պետութեան շահը ոտքի տակ առնուլ. կամ անկէ խուսել փախչիլ՝ մաքսի հարկը չվճարելով: Իրենց այս ձեռնարկին մէջ մերթ կը յաջողին, և մերթ կը բռնուին. և պետութիւնն ալ երբեմն կը պատուհասէ գնեն. դողսն, և երբեմն ալ ներողամիտ երեսնալով՝ իր զիւանաց մէջ կ'արձանագրէ այնպիսեաց համար ըրած շնորհքը: Ասոնց մէջ կը գտնուին և ինչ ինչ որ մեր նպատակին կը պատշաճին, թէ նկատմամբ Հայոց և թէ ի Հայաստանէ բերուած վաճառուց:

Դրաւք. Միլին գարուց՝ մանաւանդ ընդ արեւելից վաճառականութեան գիտութեան կարեւորագոյն մաս մ'է զրամոց և անոնց արժէից ծանօթութիւնը, որոնցմով առետուրք կը կատարուին. և թէպէտ շատը աշխատեալ, ու առաւել կամ նուազ յաջողութեամբ կրցել են ճանչնալ և ստուգել, բայց ամէնչն հարկ է որ երախտապարտ ըլլան փորքենտեան գործակալին Պալտինոյ Բէկոլդգլիի, որ իւր ժամանակին՝ չորեքտասներորդ գարուն, զրամոց և կշռոց համեմատութիւնն առ մեզ հասցընելով, Հայոց կիլիկեցոց զրամոց և կշռոց վրայ ալ տեղեկութիւններ կու տայ. զորոց վենետիկեան զիւանաց մէջ ալ շատ պատուական ծանօթութիւններ կը գտնենք, և մեծապէս հաճելի են, մանաւանդ անոնց որ կը պարապին ի հետազոտութիւն յարաբերութեանց նոյն ատենուան հայկական տէրութեան ընդ վենետաց:

1289 օգոստոս 18 թուականաւ տրուած վճռով մը Հայոց Նոր դրաւը որ նշն ատեն և գրեթէ մինչ ի վերջ կիլիկեան թագաւորութեան վարուն կամ գործածուած զրամն էր, (թէպէտ և հետզհետէ նուազելով յարժէսն), այսպէս կը համեմատի. մէկ բիւլանդ սառակինեան = 10 նոր դրամ Հայոց = 35 սկլայ վենետիկեան. որ է ըսել՝ մէկ նոր դրամ = երեքուկէս սկլայ վենետիկեան: Քառասուն և չորս տարի ետքը (13 մայիս 1333) պետութիւնը կը վճռէ ուրիշ համեմատութիւն մը ընդ Թագաւորին կոչուած հայկական զրամոց՝ որ Reale կը թարգմանուի, և ի ժամանակին՝ ու անկէ ետքն ալ Հայոց սովորական զրամն էր, և հազիւ Նոր զրամն ու Թագաւորին կոչուածը մէկտեղ կը յիշուին. և վճիռը կը պատուիրէ վենետիկեան տասուերկու կրուր զուգեւ Հայոց երկուտասան թագաւորին զրամոց հետ. նոյն վճռոյն մէջ կան նաև ուրիշ կարեւոր համեմատութիւնք վենետից կրոսից ուրիշ տեղեաց զրամոց հետ, ինչպէս Տրապիզոնի, Դանայ, Կիովրոսի, և այլն. այս վճիռը շատ հետաքննական է, բայց տեղւոյ սղու.

Թեան համար զանց կ'ընենք, եթէ ուղենայ մէկը մեր դրամը համեմատել հիմկու վարուն դրամաց՝ Գաղղիոյ Գրանքին կամ իտալական արծաթ լիրայի հետ, մեր քննութիւնն հաւանեցոյց ու Նոր դրամը առջի բերան կ'արժէր ըստ նիւթականին իբր 0,90. յետոյ նուազելով իջաւ 0,85, 0,75, և մինչև 0,57. այսպէս և թագւորին դրամը յառաջագոյն կ'արժէր 0,66 և ապա 0,49 կամ գրեթէ կէս ֆրանք։ Աւելորդ կը համարիմ յուզել զմեծ խնդիր՝ դրամաց կամ անոնց հաւասար նիւթոց վարկական արժէից վրայ. զայս միայն յիշեմ թէ Հայք ունէին նաև արծաթի փոքր բիզանդ դրամ, որ կ'արժէր ֆրանք 2.50. և ոսկի՝ այլ և այլ կշիւով ըստ զանազան ժամանակաց, յորոց ոմանց արժէքն էր 21 ֆռանք, այլոց 15 և 12։ Սակաւագիւտ են հիւմայ՝ Հայոց գործածած ոսկեղէն դրամք. իսկ արծաթի Նոր կամ հին դրամք, ինչպէս նաև պղնձիք՝ համեմատութեամբ շատ աւելի կը գտնուին, և յաճախողոյն յանուն լեւոնի և Հիթմոյ։

Իլլուսն Ժանօթմութեան կարևոր խնդրոյս՝ անհրաժեշտ կը համարիմ մէջ բերել քիչ յառաջ յիշատակուած Բէկոյողոյնայ համեմատութիւնները Զափուց, Կշոց և Դրամոց Հայոց ընդ վնենտկեանցն, և ուրիշ տեղեաց հետ, ուր որ կարելի չէ որոշել ի վնենտկանաց։

Ruotoli 1 di Spezierie d'Erminia torna in Vinegia libbre 20, e once 3 e $\frac{1}{4}$ sottili. — Ruotoli 49 di Cotone d'Erminia tornano in Vinegia libbre 9 sottili. — Occhia 1 di Seta, e di Spezierie sottile d'Erminia torna in Vinegia libbre 1 e once 4 sottili. — Il migliajo grosso di Vinegia torna in Erminia ruotoli 76 in 78 o vuogli Catars $20\frac{1}{2}$ d'Erminia. — Mars al cento dars al peso di Vinegia fa in Erminia mars $106\frac{1}{2}$. — Braccia 315 di tele line alla misura di Vinegia, torna in Erminia Canne 100. — Libbre 11 sottile di Vinegia tornano all'Ajazzo d'Erminia libbre 10 — Costano le mercatanzie a condurre da Vinegia in Erminia, e d'Armenia a Vinegia per nolo di comune ordinato per lo comune di Vinegia in Galee armate, come dirà qui a piede, e diviserà inanzi a una carta. — Tele grosse e Canovacci per soldi 6 di grossi dars di Vinegia alla balla, a peso 350 al peso grosso di Vinegia. — Rame, e Stagno e Ferro soldi 6 di grossi dars la balla di peso libbre 260 al peso grosso di Vinegia. Argenti in pezzi 1 per cento. — Oro filato, Argento filato, e altre simile cose dee avere di casse 3 per cento. — Tutte Spezierie soldi 13 di grossi dars del migliajo sottile. — Ciambellotti 2 per cento in Galee armate, in legno disarmato $1\frac{1}{2}$ per cento. — Zucchero soldi 10 di grossi dars del migliajo sottile.

Առ լաւ եւս խելամոռութիւն որպիսութեան առևտրի վնենտաց՝ զորս յայլ և այլ ժամանակա և ի դէպս ունեցեր են ընդ Հայոց, և այն պատճառաւ մերթ ընդ մերթ յառաջ եկած դժուարութեանց, պիտանի են յոյժ երկու վաւերագիրք (documents), յորոց մին զըրուած է ի 1312 յԱյաս քաղաքէ ի ձեռն Գրիգոր Տէլֆին պայլի առ դուքսն Մարլինոյ Ծործի. իսկ միւսն՝ զոր ի 1330 գրէ Պետրոս Պրա.

կատին: Առաջնորդն Տէլֆին կը ծանուցանէ դքսին, թէ տարի ու կէս կամ երկամեայ ժամանակ վարած պալլուծեան պաշտամանը միջոց՝ ներս մտած վաճառուց կէս առ հարիւր իրեն ընկած բաժինը ընդու-
նելով, գումարն եղած էր իբրոյ վաթսուն լիպրա կրոսից. մէկ կրոսը համարելով հարիւր քսան ֆրանք, վաթսուն կրոսին գումարն կ'ըլլայ 7200 ֆրանք. և այս համեմատութեամբ (200×7200) = 1,440,000 ֆրանք կ'ըլլան առ նուազն վենետաց վաճառուց արժէք, և հիմա-
կուան արժէքով գէթ երեք միլիոնի կը գումարին: Այս պզտիշմարաւ կրնանք գուշակել և մերձաւորապէս համեմատել թէ քանի հարիւր միլիոններու առևտուր ըրած են վենետք յուծսուն ամս բարդաւա-
ճութեան Այասոյ. և քանի միլիարք անցած են քաղաքին հրա-
պարակաց վրայ, ոչ միայն իրենց՝ այլ նաև ուրիշ վաճառաւաճ աղ-
ջաց ապրանքէն, Գենուացւոց, Պիզացւոց, Փլորենտացւոց, և այլն, և
ուրիշներուն՝ զորս կը յիշէ կամ չի յիշեր Բեկորդդի, և յամենայն
աղիսամաղխէ արևելից և արևմտից՝ որ ընդ ծով և ընդ ցամաք կը
թափուէին յառաջնակարգ շահաստանն և նաւահանգիստն այն ԺԳ-Գ
գարուց վերջին և առաջին կիսուն, որ ի ժամանակին ճառագայթա-
ւէտ կը ցոլանայր ընդ ամենայն աշխարհ. իսկ հիմայ՝ իբրև զկէտ
մի աղօտացեալ և աներևութացեալ, մանաւանդ թէ անհետացած,
մեռեալ և մոռցուած յամենայն վաճառականաց և ընչասիրաց աշ-
խարհի: Կը ծանուցանէ դարձեալ Տէլֆին թէ զրկած է առ գուքսն
տասն լիպրա կրոսից, ինչպէս նաև քսան կրոս առ նախորդն, և մնա-
ցածը ծախեր է ի պէտս հայրենակցացն և անոնց հօն ունեցած տանց
վրայ: Կը յաւելու թէ դժուարին կ'ըլլայ տեղւոյն վրայ դանձել հա-
րիւրին կէս սահմանեալ տուրքը, և թէ լաւագոյն է առնուլ զայն ի
վենետիկ. վասն զի, կ'ըսէ, Բուպլինի և Գոնդարլինի երկու վաճա-
ռականներէն որ 1400 պարկէն աւելի վաճառք փոխադրեր էին ի-
րենց նաւերովը՝ հաղիւ կրցեր էր տասն կամ տասնըմէկ կրոս բաժ
առնուլ:

Իսկ Պրակատինի գրուածն՝ յամի 1330 կամ ի յաջորդին՝ ողբա-
կան եղանակ մը ունի. զանգատելով այն զրկանաց համար՝ զորս վա-
ճառականք վենետք կը կրէին ի Հայս, յիշելով յանուանէ նաև զու-
մանս ի զրկելոյն. յորս բանտուողք, սպաննուողք և կողոպտուողք
ալ կան, և իրենց իրաւունք չըլլար: Կ'իմացընէ թէ ստըկին կշիւքն
վեց առ հարիւր նուազած է. թէ նաւուց հասած կամ մեկնած ա-
տեն՝ կ'ուսացընեն կամ անկարգօրէն կը քննեն և կշիւքը կը խարդա-
խեն, — թէ հակառակ պարգեւագրին տուելոյ ի թաղաւորէ՝ վեց կամ
չորս առ հարիւր բաժ կը պահանջեն քաղաքէն դուրս, և մէկ առ հա-
րիւր ի քաղաքին: — Ի վենետացի ցփսիագործաց աւելորդ չափողչք
կը պահանջուին. — յԱտանա անկտակ մեռնողի մը ինչքը չթողուցին
որ պայլը գրաւէ, և իրեն թոյլ չեն տար վենետաց դատաստանը

տեսնել, ինչպէս յառաջագոյն շնորհուած էր ու սահմանուած, այլ կը ձգեն յատեան թագաւորին: Այս դանդաղացող վրայ կը յաւելու, թէ ի վաճառականաց շատ ծախք պահանջուելուն պատճառաւ, պատշաճ կը համարէր տուները նորոգել ու վարձել, և այն հասցիքէն ռոճիկ ու թռչակ տալով՝ երկու հրապարակահատուչ (plazeri) պահել որպէս յառաջն:

Յայտնի է որ այսպիսի ու այսպիսի բողբոջանաց վրայ չէր կրնար դուքսն լուռ կենալ. ուստի գրեց առ թագաւորն Հայոց Լեւոն Դ. և նոր Պարգևագիր մ'ալ ընդունեցաւ (1333). ինչպէս պիտի տեսնենք քիչ ետքը՝ ի կարգի յարարերութեանց երկոցուն արքունեացն. ընդ որում և մեր թագաւորին վերջին թուղթը առ դուքս ժամանակին, խնդրելով զհաւասարն՝ զոր յարքունուստ տուած էին մերքն առ մահմետական վաճառականս ի Հայս՝ պարտատեարս վենետաց:

Վենետաց կիլիկիոյ Հայոց հետ վաճառականական յարաբերութեանց վրայ համառօտ և հարկանցի տեսութիւննիս կնքելով, հարկ կը համարիմ յաւելուլ ինծի ծանօթ քանի մը առևտրոյ յիշատակքն այն ախարհէն դուրս, ի բուն և ի Մեծ Հայս. որպիսի է հետաքննական անձն և գործ Առաք կոչուած մէկու մը, որ յանուանէն հայ կը ճանաչի, մեծ Հայոց մէջ ի ժամանակին շատ գործածական անուն մը. և ի դիւանական գրուածս՝ թուրք և թաթար բառով Բաշառալի կը կոչուի, և համարիմ թէ թարգման, դեսպան կամ կարաւանապետ կը նշանակէ. և յիրաւի՝ այսպիսի պաշտօն մ'էր ունեցածը, Հայոց ու Պարսից սահմաններէն ընկերելով կամ առաջնորդելով կարաւանաց ի Տրապիզոն. որ և անգամ մը հանդիպելով և ի վենետիկ՝ խնդրեց որ ի վարձ իր բազմամեայ ծառայութեանց յօգուտ և ի շահ հասարակապետութեան երկրին՝ երթալով և գալով ի Դաւրիթիոյ ի Տրապիզոն՝ առ մէն մի գրաստարեւոն՝ գրամական չընորհք և պարգև մը ըլլուի իրեն. բայց խնդիրն ընդունելի չեղաւ (16 յունիս, 1332): Նոյն օրերը (յունիս 20) ի վենետիկ գտնուեցաւ մահմետական մը Հաճի Սիւլէյման Թալիպի անունով, որ նոյն Աւագայ թարգմանութեամբ յանձն առաւ որ իրեն տրուած 4000 բիզանդ գրամէնի փոխարէն վնասուն յերկրում մասն հանուի. նոյնպէս վնաս կրող երկու անձանց՝ Սանտուոյի և Նիկողայոսի ճիւսթինիանի՝ երեք փող առ բեռն, ինչպէս իրեն ալ կ'իյնար չորս բիզանդ առ բեռն: Այս պայմանը ինքն Սիւլէյման գրեց ի պարսիկ լեզու, և Աւագ թարգմանեց յիտալականն, և վկայեցին՝ Մահմետ օրդի Ծէյլս Գութպետինի և Հաճի Ալի:

Նշանաւոր և ոչ անծանօթ է ոմանց դիւանոց՝ Դրիմու Թաթարաց հետ եղած վաճառականական գէպը մ'ալ. յորս և խնդիրը Հայոց որ ի թերակղզւոյն կը բնակէին բազմութեամբ, և որոց վէճք և գործք յաճախագոյն եւս կը գտնուին ի դիւանս Գենուացւոց: Դրիմու Սուլ-

ղաթ գլխաւոր քաղաքին կուսակալն Ռամազան՝ 1356 թուին (2 մարտ) Սքսէրայ քաղաքին մէջ պայման դրաւ վենետաց հետ, որ իրենց վաճառուց արժէից համեմատ երեք տա հարիւր հարկ վճարեն. նոյնպէս ուրիշ քանի մը պայմաններ ալ: Դաշնագրով մ'ալ շնորհեց իրենց որ կարող ըլլան գալ ի նաւահանգիստ փոքովածոյ (Provato) կամ Նոր քաղաքի լծերակղզոյն, պահանջելով ի իր հպատակաց եղած փաստը հատուցանեն. որոց մէջ էին և Հայք՝ գերեալք ի վենետաց այն գննուացի նաւուն հետ՝ որով եկեր էին ի Պոլիս, իրենց 4000 բնա կարասեալ. կուսակալը կը խոստանար որ ինքն ալ ետ դարձընէ իր գրաւած վենետաց ինչքը: Ս.յս վաւերագիրը՝ արդէն իսկ շատ տարի յառաջ հրատարակուած է ի Սալզադրի կոմսէ:— Ռամազանի յաջորդը՝ միոյն տեղ երեք նաւահանգիստ շնորհեց, և էին, Provato, Calitra, Soldadi. Առ սա գրեց Գրիմու թաթարաց Պէրաի Դան՝ որ Ռամազան կուսակալին պէս պահանջէ ի վենետաց իրենց կողոպուտը, որոց մէջ կը գտնուէր գումար մը 1300 արծաթոյ և 500 բնոն վաճառք Պասուար անունով անձի մը որ կու գար ի Կիպրոսէ: Բայց Դանին բարեսիրտ կ'ինը վենետաց շնորհք մը ուղելով ընել, զրկելոց՝ յիւր անձնական գանձէն հատոյց 11,000 բիզանդ դրամ, որոց 5000 ը Հայոց բաժինն էր. քսան բիզանդ ալ ա. նոնց թոշակ. դրսին ալ գրեց որ Հայոց պահանջից համեմատ (pro precepto Arminium) կը հատուցանէ զգումարն (10,998 բիզանդ). 550 դրամոյ գումար մ'ալ ի փոխարէն 2830 դրամոյ, որոյ պարտական ըլլանքին՝ ինքեանք վենետոք ալ կը վկայէին:

Բաղմաթիւ յիշատակք ալ կը գտնուին ի զիւանս՝ վաճառականա. կան յարարերութեանց վենետաց ընդ Դավրիժու՝ մայրաքաղաքի Պարսկահայոց, և որոց քննութիւնն կը հեռացընէ զմեզ մեր նպատակէն. այսպիսի միայն յիշեցընենք որ Շէյխ Իւվէիզ զան կամ ի ա. գաւոր Դավրիժու՝ յամի իբր 1369 Պարզեագիր մը տալով առ դուքսըն, կը հաստատէր իր նախնոյն Պուսայիզ զանի շնորհմունքը, և կը հրաւիրէր զվաճառականս՝ ապահով և անվտանգ ցուցընելով Տրապիզոնէ մինչև ի Դավրէժ ճանապարհը: Դուքսն ալ կը ծանուցանէր նմա թէ շատ վաճառականք կը սպասեն ի Տրապիզոն՝ ճամբաներուն ապահովութեանը կասկածանք. վասն զի աւաղակք կողոպտեր էին զվաճառականս մերձ յԱլեիկ, որ հին և անուանի տեղ ու բերդ մ'է ի մեծ Հայս, ոչ շատ հեռի Երզրուումայ, և Սյրարատ աշխարհի գաւառի մի անունը կը կրէ: Իւվէիզ զան գրեց յայնժամ առ պալէն Տրապիզոնի (իբր ի 1373), թէ Սպարամ (Իպրահիմ) անունով մէկը զրկելով՝ բռնեց ու պատժեց զաւաղական ու գողօնը ետ դարձուց, ուստի աներկիւղ ու համարձակ կրնան վաճառականք գալ ու երթալ: